Արձանագրություն N 2

«ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2017/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող
հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Երևան «10» հոկտեմբերի 2017 թ.
ժ. 11.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	–	Գ. Թադևոսյան	/«Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալ/
Հանձնաժողովի անդամ՝	–	Հ. Սարգսյան	/«Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ/
Հանձնաժողովի անդամ՝	–	Ն. Մարգարյան	/«Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, կադրերի գծով գլխավոր մասնագետ/
Հանձնաժողովի քարտուղար՝	–	Ա. Սարգսյան	/«Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի ՏԱ բաժնի գլխավոր մասնագետ/

«Մաքսիուր» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Սոնա Նավասարդյանը

<u>1. Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հրավերով հայտ ներկայացրած մասնակիցների մասին</u>
(Գ. Թադևոսյան

1.1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել.

«ՍիՓԻԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	ք. Երևան, Պուշկինի 1, հեռ. 54-09-11
«Մաքսիուր » ՍՊԸ	ք. Երևան, Տպագրիչների 8, հեռ. 52-67-51

<u>2. Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտի բացումը</u>
(Գ. Թադևոսյան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի փաթաթները պարունակում են.

- ընթացակարգին մասնակցելու դիմումը / Հավելված 1 /,

- հայտարարություն մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին / Հավելված 2 /,
- տվյալներ մասնակիցների իրական շահառուների մասին / Հավելված 2.1 /,
- հայտարարություն որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին / Հավելված 3 /,
- հայտարարություն առաջարկվող ապրանքների հրավերով նախատեսված բնութագրերին համապատասխանության մասին / Հավելված 4/,
- գնային առաջարկ՝ ինքնարժեքի, շահույթի և ԱԱՀ-ի հաշվարկով / Հավելված 5/,
- Տուժանքի մասին համաձայնագիր(հայտի ապահովում, վճարման պահանջագիր) /Հավելված 10/

2.2 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը կազմված են մեկ բնօրինակից և երկու պատճեններից: Ներկայացված փաստաթղթերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2.3. Ընկերությունների ներկայացրած գնային առաջարկները.

«ՍիՓԻԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ /ՀՀ դրամ/

ը/կ	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	ԱԱՀ	Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ (3+4) /տառերով և թվերով/
1	2	3	4	5
1.	Բենզին ռեգուլյար	9 342 500	1 868 500	11 211 000 /տասնմեկ միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար/

«Մաքսիուր» ՍՊԸ /ՀՀ դրամ/

ը/կ	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	ԱԱՀ	Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ (3+4) /տառերով և թվերով/
1	2	3	4	5
1.	Բենզին ռեգուլյար	9 337 450	1 867 490	11 204 940 /տասնմեկ միլիոն երկու հարյուր չորս հազար ինը հարյուր քառասուն/

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասին

(Գ. Թադևոսյան)

3.1 Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների ուսումնասիրության և համեմատության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

3.1.1 Որպես նվազագույն գին առաջարկած մասնակից ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Մաքսիուր» ՍՊԸ-ին:

3.1.2 ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների ճշտման նպատակով հարցում կատարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին և ստացված եզրակացության հիման վրա, ինչպես նաև մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացումից հետո, ծանուցել «Մաքսիուր» ՍՊԸ-ին պայմանագրի կնքման որոշման վերաբերյալ /6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա) իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

բ) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը/

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Թադևոսյան

Անդամներ՝ _____ Հ. Սարգսյան

_____ Ն. Մարգարյան

Քարտուղար՝ _____ Ա. Սարգսյան